նրան իր խնամակալութեան ներքոյ, հոգ էր տանում նրա ծերութեանը: Այդ թշուառի ուղեղն անգամ իր բնական դրութեան մէջ չէր մնացել: Նա, որ մի ժամանակ երկրների սարսափն էր ու հրէշը, նա, որ մի ժամանակ փափուկ մոմի նման դարձնում էր իր ձեռքում մարդկանց սրտերը, այսօր մի անմիտ երեխայի նման շատ անգամ ասում էր իր բարերարուհիին. «Նենէ՛, ե՞րբ ինձ համար կարմիր կօշիկներ պիտի առնեսէ: Խորին ծերութիւնից նա երեխայացել էր: Եւ իրաւ, նրա թափած ատամները մի քանի տարի առաջ նորից սկսեցին բուսնել, եւ նրա թափած մօրուքի տեղը յայտնոեցան փետուրի նման փափուկ, հազիւ նշմարելի մազեր:

Այդ յաւիտենական ծերունին յիշեցնում էր Սաւրայի, այդ խաչագողների որջի, յաւիտենական մեղքը, որը եւ ծերանում է, եւ մանկանում է...

Ե

— Այստեղ... այստեղ թաղեցին, — ասում էր մի երիտասարդ վշտահար դէմքով, ցոյց տալով մի հողադամբարան, որ հազիւ որոշւում էր գետնի մակերեւոյթից: — Ռաշիդը ճանաչում է այդ տեղը... նա այնքան մոռացկոտ չէ... — աւելացրեց նա տխուր ձայնով: — Եթէ մի օր ջրհեղեղ գա, բոլոր լեռները ողողէ եւ մի փոքր բարձրութիւն անգամ չմնայ երկրի վրայ, Ռաշիդը դարձեալ կգտնէ այդ դամբարանը...

Այդ խօսքերը դարձրած էին դէպի մի պարոն, որ կանգնած տխուր դէմքով նայում էր ցոյց տոած տեղի վրայ: Նրա թեւքը մտել էր մի նիհար, բարձրահասակ տիկին, որ իր ուսերով վեր էր պարոնից: Նա իր ձեռքում բռնած կանացի ամպհովանիով հովանաւորում էր թէ՛ իրան եւ թէ՛ պարոնին: Նրանց մօտ կանգնած էին մի քանի մանուկներ զանազան հասակների, եւ բոլորի ուշադրութիւնը դարձրած էր ցոյց տոած տեղի վրայ: Նրանց հագուստից երեւում էր, որ այդ մարդիկ ճանապարհորդներ էին, որ հէնց նոր էին իջել կառքից, որ մի քանի քայլ հեռու դեռ կանգնած էր ճանապարհի վրայ:

Այդ այցելութիւնը կատարւում էր մեր ընթերոցներին ծանօթ Առաքելոց վանքի արտաքին պարսպի մօտ, այնտեղ, ուր մի անգամ ցոյց տոինք Դաւիթ Անյաղթի, Խորենացու, Ղազար Փարպեցու մոռացոած շիրիմները: Այդ շիրիմների թւում աւելացել էր մի այլ մոռացոած գերեզման...

Այդ առանց տապանաքարի, առանց որեւէ յիշատակարանի, լուռ եւ համր գերեզմանի մէջ հանգչում էր մեր ծանօթ «Համրը»: